Ուրախությունից Արշոն այդ որը քաղց չզգաց: Կոմունարկան զլխին, ձեռնափայտով շրջում եր փողոցսերում և զգում եր, վոր հաղթական տեսք ունի: Ազնքան ուրախ եր, վոր շուկայում մի յերկու ծիրան թոցքեց միայն և յերկու վարունգ: Վորոշեց վարունգը տանել «տուն», իսկ ծիրանները կերպվ: Նստել եր թագուն տեղ, խանութների յետեւ և հանգիստ ուտում եր, մտածելով զինվորների բարության վրա: Հազիվ մի ծիրան կերել եր և ուզում եր յերկորդը դնի ծիրանը: Խուժաններից մեկը՝ Արտուշը վրա հասավ:

— Լավ ա, քո աշխատածը դու ես ուտում, — գլուխը թափ տվեց խուժանը, և ուզեց գնալ:

Արշոն, սակայն, կանչեց նրան:

— Արի, լավ, արի, — ասաց: — Արի ես մեկնել դու կեր, ձենդ կտրի:

Բայց խուժանը չմոտեցավ:

— Չեմ ուզում, — ասաց խիստ, ու դնաց:

Արշոնի սիրալ գող ընկավ. դող ընկավ այն պատճառով, վորովինետեւ սա յերրորդ անդամն եր նրան տեմնում ելին իր «աշխատանքը» թագուն ուտելիս: Յերկու անգամ նկատողություն են ա-

բել և զգուշացրել, վոր չեմի մերրորդ անգամ
բանիք՝ զուրս կանեն, նա ծիրանի հանեց բերնից,
գեղ գցեց ու, աճը սրառում, զնաց «տուն»:

Խուժանները չելինսիրում մի գործ հետաձգել
մյուս որդան, և այդ լեռեկո, Զոփուրի զլեավո-
րությամբ, քննեցին Արշոյի գործը:

— Դրուստ ե, վարպետ, ինչ ասում են, —
հարցրեց Զոփուրը: Թագուն ծիրան ես կերել:

Արշոն նստած էր բոլորից առանձնացած ու
մտահոգ, ամաշում եր և չեր կարողանում լնկեր-
ներին նայել:

— Հալբաթ յես սուտ եմ ասում, խոսեց
Արտուշը նեղացած: — Իմ աշքով տեսա, ելի:

— Ես քանի անգամ ե՝ ըթենց ե անում,
ելի, — ասաց Քուրդը, վոր Արշոյին լեկած որից
չեր սիրում: — Եղ համ մեր տեհածն ա, բա ինչ-
քան ուտում ա ենողես ..

— Եղ ելավ լնկերութին, — ասաց Վինավասը
քիթը վեր քաշելով:

— Եգպես լնկեր սկի հարկավոր չի, — ասաց
մի ուրիշը:

Մենք աշխ ստենք՝ ինքը ուտի, իրա աշ-
խտածն ել ինքը ուտի:

Խուժանները ծիծաղեցին: Յերբ ծիծաղը լոեց,
բոլորն ակսեցին միտափին գժղոնել, բողոքել:

— Վոր եղպես ե, թնդ զնա:

Հա, զա հո Մինասիջ ու Սեթոից լավ
տկա չի. Նրանց վոր զուրս արինը, դրան ինչու
պլախ պահենք վոր...

— Ես իրեք անգամ ե եսպես ա անում, —
խոսեց նորից Քուրդը: շատ գժղոն, վոր հարցը
ձգձգվում է:

— Եսկերը վոր ընկերի մասին չի մտածում —
ավելորդ ա:

— Լավ, լավ, — ասաց Զոփուրը և, գեմքին
մեծի լրջություն տալով, շարունակեց: — Պարզ ա,
աղեք, պարզ ա... Վարպետ, — գարձավնա գլուխը
կախ նստած Արշոյին, — քանի վոր դու, ախպեր
ջան, եղանի բան ես արել, այսինքն՝ քանի վոր
կարգին լնկերութին չես անում, այսինքն՝ քու
աշխատածը թագուն ես ուտում, գնա, ախպեր
ջան, .. դու քեզ համար, մենք մեզ համար ..

Զոփուրը լսեց մի փոքր ու շարունակեց
խիստ:

Եգուցվանից գնա: Հսուկացար, Մենք ես-
պես ենք: Յեթե ամեն մինը իր աշխատածն ու-
տի — ել ինչ խուժան: Զե, զնա քեզ համար, —
վերջացրեց Զոփուրը ճառը և ավելացրեց: — Դե,
աղեք, քնեցեք:

Արշոս, վոր բալոր ժամանակ կուչ յեկած,
զլուխը կախ լսում եր լնկերներին և սիրա չեր
անում մի խոսք ասել, զղջալով արածի համար,

սակայն համկարծ, յերբ գրդոված վորոշեցին
դուրս անել նրան, նաև վեր կացավ և ուղեց նե-
րողություն խողը ել:

Յես սխալվել եմ, տխաբեր, ել...

Թարկը տուր, — ասաց Զոփուրը, — իրեք
անգամ արել ես, վերջացավ: Ել վոչ մի խոսք
քնի ու առավոտը գնա...

Արշոն, խոսքի կեսը բերանում, լուց: Լուց
ու նստեց տիմուր: Գիտեր, վոր խուժանից հե-
ռացնել — նշանակում ե՝ այլիս իրավունք չունի
յերեալ այն տեղերում ուր խուժանն ե լինում:
այսինք չի կարող գնալ շուկա, չի կարող գնալ
ճաշարանները, սայլերի առաջ. խուժանները չելին
թողնի, ինչպես չելին թողնում այն բոլոր տղա-
ներին, վոր իրենց մեջ չելին: Նա այդ լավ զիտեր
և դրա համար տխրեց ու տխուր ել պառկեց
քնելու:

Պառկեց, բայց քունը չտարավ.

Մտածում եր բոլոր ժամանակ այն ժամին,
թե ինչ պիտի անի և ինչպես պիտի տպրի:

Մտածում եր ու չեր կարողանում քնել:

VI

Խուժանից գուշո գայով՝ Արշոն չգիտեր ինչ
անի և ուր գնա: Պատվում եր քաղաքացին այգում
և նայում զբունողներին: Շուկան, ճաշարանները
չեր ուղում գնալ վոչ թե նրա համար, վոր խու-
ժանները չելին թողնի: գուցե և բան չասելին
իրեւ ծանոթի, բայց չեր գնում նրա համար, վո-
րովհետեւ ամաչում եր ընկերներից: Յեվ այդ
պատճառով առաջին որը անցրեց գրեթե բաղցած,
յեթե չհաշվենք իրիկվանից գրպասում մնացած
հացի կտորը, վորը, իր «զործի» քննության պատ-
ճառով, իրիկումը չկարողացավ ուտել: Իսկ մյուս
որը, յերբ քաղցը նեղեց՝ հիշեց կայազորի կարմիր
բանակացիներին, վոր դյխարկ ու հաց ելին տվել
իրեն, հիշեց ու գնաց նրանց մոտ: Ինչպես ա-
ռաջին անգամը, այժմ ել կարմիր բանակացին-
ները բակում զանազան բաներով ելին զբաղված:
շոր ելին թափ տալիս, վոտնաման եին սրբում,
մարգանք ելին կատարում և մի յերկուսն եր,
առաջիւ պես, լրագիր ելին կտշուում:

Կարմիր բանակացիններից մի յերկուսը ձա-
նաչեցին նրան:

- Հը, ինչ կա, խուժան;
- Հեծ, ասաց Արշոն, ու պլուխը կտիս զցեց:
- Եթի՞ գլխարի ես ուղմւած:
- Չե... Ու, լոեց:
- Սոված ես, հարցրեց լրադիր Հարգացողներից: Ճեկը և, տեսնելով նա գլուխն ամիելի իջեցրեց, ձայն տվեց. — այ տղա, խուժանը ոսված ա, միքիչ հաց բերեք:
- Կարմիր-բանակայիններից ճեկը բերեց մի կտոր սև հաց, ու տվեց Արշոյին:
- Ուրախությունից նրա դեմքը փայլեց:
- Շնորհակալ եմ, — ասաց, աչերը զցելով հաց տվող և տալու կարգադրություն անող կարմիր բանակալինների յերեսը, ու սկսեց ուսեր:
- Այնուհետև, յերբ փողոցում բան չեր զըտնում՝ գնու ս եր կայազորի կարմիր-բանակայինների մատ: Իսկ գիշերները քնում եր այգու այն նստարանի վրա, ուր քնում եր քաղաք յեկած առաջին որերը: Հիմա լավ եր. վոչ միայն որերը, գիշերներն ել տաք ելին, և նա չեր սրսում: Ամեն որ, առաջվա պես, հանդիպում եր ելի խուժան ապահներին, բայց չեր մոտենում: Մի յերկու անգամ պատահեց մարդիկ բեռավին, մի անգամ ուտելիքներով լիքը կողով, հետո մի

կապոց, տպա մի յերեխա, և դրանց համար փող ստացավ: Յերեխան զրկելու համար, սրինակը յերեխայի մազրը ավեց ամբողջ 20 կտպեկ: Այդ սրբ նրա ուրախությանը չափ չկար: Բայց այդպիսի «գործեր» քիչ ելին պատահում, և նոշատ ժամանակ նստում եր այդում ու նայում զբոսնող մարդկանց: Շոգ եր, և այդին, քսնի գնում, լցում եր ամեն աեսակ մարդկանցավ: Վորոնք շարվում ելին նստարանների վրա և գլխարկները վերցրած, հովհարում իրենց: Ու փոքրիկ տղաները առեն որ փոքրիկ կուլաներով ջուր ելին ծախում, կանչելով.

— Լավ ջուրը, սառը ջուրը:

Ծախած ամեն մի բաժակ ջրին ստանում ելին մի յերկու կոպեկ, յերեքն շատ, նայած մարդուն: Ով խղճով եր՝ շատ եր տալիս, ով չե՞քիչ: Մի որ Արշոն տեսավ ջուր ծախող տղաներից մեկն աշխատել եր հիսուն կոպեկ, զարմանքից չկարողացավ իրեն պահել:

— Եղքանը եսոր աշխատեցիր, — հարցրեց զարմանքից փայլող աչքերով:

— Ընդ, — գլխով արավ տղան զոհ փրաշխատանքից:

— Ամեն որ եգբան աշխատում ես:

— Ընդ: Որը զիվա, որ կտ՝ տվեկ, որ իր՝ պակաս:

— Սա քանիսով ես առել, —հետաքրքրվեց Արշոն ձեռքը կուլի վրա դնելով
 — Հեծ, վեց շահի:
 — Վեց շահի, զարմացավ Արշոն:
 — Հի՞, —գլխով արավ աղան, փողերը պլանոնը դնելով:
 — Իսկ բաժակը քանիսով ես առել, —շարու նակեց Արշոն հարց ու փորձը:
 — Ես հեծ, մեր տանից ե, —ասավ տղան ու գնաց կանչելով: —այ լավ ջուր, սաւի ուր...
 Արշոն մտածունքի մեջ ընկավ: Ինքն ուներ բառասուն կոպեկ, վոր ձեռք եր բերել լիու կրելուց: Մտածում եր՝ ինչու ինքն ել մի կուլա շառնի և տղաների նման ջուր ծախի, բայց հիշելով, վոր խուժանները ջուր ծախող տղաներին «սպեկուլյանտ» են ասում — ամաչում եր:

Այնուամենայնիվ, յերկար մտածելուց հետո, Կա գնաց շուկա՝ կուլա և թիթեղե բաժակ առնելու:

Յեվ հետեւալ որն արդեն ջուր եր ծախում մյուսների նման «լավ ջուր, սառը ջուր» կանչելով: Կանչում եր մի քիչ ամաչելով, անգարծ, առանց յերգեցիկ ձայնի, ինչպես մյուսները: Կանչում եր ու կանգնում նստարանների առաջ, սպասելով վոր ջուր ուղեն մարդիկ, ու

թեև շատ քիչ մարդ եր ջուր ուզում, վորովհետեւ ծախուդ շատ կար, այնուամենայնիվ Արշոն անցնում եր բոլոր ծառուղիները, մոտենում եր բոլոր նստարաններին. «լավ ջուր, սառը ջուր»...



Մի խոռքով՝ որական հացի վող եր աշխատում: Կերակրվում եր առաջվանից մի քիչ լավ — հայ,

միրդ, մի յերկու անգամ ել զնաց ճաշարան, այժմ վոչ թե հաց ու միս խնդրելու, այլ ճաշելու, Գնում եր, ինարիկ ամենահժան ճաշարանը, սիրան ուզում մեկ մեկ ել տաք բան ուտել, վաղուց տաք կերակուր չեր կերել:

Բայց այս թիջեր պատահում, ի հարկեւ.

Գործը, պետք ե ասած, ծանր չեր, բայց մի անախորժ բան կար: Խուժան ընկերները պատահելիս, նրան ել, ինչպես մյուս ջուր ծախող ներին, «սպեկուլանտ» ելին սուսմ սակայն այնքան վատ չելին վերաբերվում, ինչպես մյուսներին: Վատ եր նրա հետ միայն թուրպը, պատահած ժամանակ խեթ-խեթ նայում եր և գոսում՝ «սպեկուլանտ»... Մեկ-մեկ ել դիս: Ժամբ ջուր եր ուզում, և յերբ Արշոն մերժում եր, — հայնում եր և սպառնում բռունցքով.

— Սպասիր...

Յեկ Արշոնի թվում եր, վոր Թուրպը նպատակ ունի իր կուլեն կոտրելու, այդ պատճառով իր նստարանի վրա քնելիս՝ կուլան, թիթեղե բաժակի հետ միացին, գնում եր կողքի ծաղկանոցը, փշալարերի տակ բուսած խիտ կանաչի մեջ, ծածկում եր կանաչներով ու տերեններով, և քնում: Սակայն վոտնաձայն լոելիս, վեր եր թաշում հաճախ և նայում կուլի կողմը, թե հոչեն զողանում: Յերբեմն ել վատ, մութ, անկատ

յերազներ եր տեսնում, մեկ տեսնում եր իրան զյուղում, կոշկակարի ալ հետանցում, . մեկ բաղաբում՝ խուժանների հետ զողաթյուն անելիս, հաճախ ել զյուղ ու բաղաք խառնվում ելին իրար և նա չեր կարողանում յերազը հիշել:

Ու որերն անցնում ելին իրար նման, ամբողջ ոգոսառոս ամիսը ջուր եր ծախում, և չեր պատահում, վոր մեկը բաժակին յերկու յերեք կոսկեկից ավելի վող տար, սովորականը մի կոսկեկ եր կամ յերկու, երբեմն պատահում եր այնպես, վոր մեկը յերկու բաժակ ջուր եր խմում և վճարում եր միայն մի կոսկեկ:

Մի խոսքով — մեծ ոգուտ չկար:

Բայց մի որ Արշոնի բախտը բանեց: Այդ ոգոսառոսի կեսերին եր, մի սաստիկ չոպ որ: Այգում հայտնվեց մի հաստ, բարձրահասակ մարդ, վոր ուներ շատ հաստ բեղեր և վսկե մատանիներ. զրանից մեկը բութ մատին: Նա յեկավ մի ջանել տղացի հետ, նստեց նստարանին ու սկսեց ճակատի քրտինքը սրբել թաշկինակով: Արշոն հենց այդի մանելուն պես հետեւց նրան, զիտեր վոր այգի մանողը, մանավանդ շոգած, հաստ մարդիկ ջուր են ուզում: Ռւսոի, յերբ հաստ մարդն սկսեց ճակատը սրբել Արշոն մոտեցավ և կանչեց:

— Լավ ջներ, սառը ջներ...

Հաստ մարդն, իսկապես, ծարավ եր. նա մի անդամից խմեց յերկու բաժակ և հարցը եց, թե ինչ պլանի տա:

— Դու զիտես:

— Տաս կոպեկ հերի՞ք ե, — տապ մարդը հաստ ձախով:

Արշոնի աչքերը փայլեցին: Առավ տառը կոպեկը և ուրախությունից մարդուն, վոր ջուր խմելուց հետո, բեղերը սրբում եր թաշ-կինակով: Արշոն սեկ ել նայեց նրան, նայեց կողքի տղային, ժպտաց կը կին և ուզեց հեռանալ, բայց մարդը կանգնեցրեց.

— Լսիր, աղա. յեկ այստեղ:

Արշոն մոտեցավ:

— Որական ի՞նչ ես վաստակում:

Արշոն մի վայրկյան շփոթվեց, չիմանալով ի՞նչ ասել, բայց հետո իրան հավաքեց.

— Հացի փող, — ասաց:

Ապա մարդը հարց ու փորձ արավ, թե վորակղացի՞յե Արշոն, քանի՞ տարեկան ե, հետո հանաքով խփեց ուսին և ասաց:

— Ի՞նչ ասմ, վոր յերկու բաժակ խմես ըու ջրից:

— Վճինդ թե, — զարմացավ Արշոն:

— Խմիր ելի՞: Յերկու բաժակ խմիր, հինգ կոպեկ տամ... լավ:

Արշոն չեր հասկանում. ինչպես. իրա ջուրը ինքը խմի և փողը ուրիշը տա:

— Յես խմեմ, փողը դու տան, — հարցը եց տարակուսած:

— Հա, յերկու բաժակ խմի, հինգ կոպեկ տամ:

Արշոն նոր միայն հասկացավ նրա միաքը և, թեև ծարավ չեր, խմեց յերկու բաժակ իր ջրից ու ստացավ հինգ կոպեկ:

Մարդը և նրա մոտ նստած տղան ծիծաղեցին, բայց Արշոն գոհ մնաց իր վաստակից. յերկու բաժակ ջուրն ի՞նչ ե վոր... ծարավ չեր, բայց խմեց: Մեծ բան չի...

Այդ որը նա վաստակեց բոլոր որերից շատ: Աշխատածը նա, սովորաբար, գնում եր ծոցագրպանը և զրպանի բերանը ամրացնում անզիւդական քորոցով ու, չնայած դրան, գիշերը մի կան քորոցով ու, չնայած դրան, գոշափում եր քանի անգամ, կուլին նայելիս, շոշափում եր զրպանը, տեսնելու՝ փողերն իրենց տեղն են զրպանը, իսկ այդ գիշեր նա առանձնապես ուժե վոչ: Իսկ այդ գիշեր նա առանձնապես ուշագիր եր գեպի զրպանւ. յերկու անգամվա փոխարեն զարթնեց չորս-հինգ անգամ ու ձեռը տարավ զեպի կուրծքը: Մի բանի անգամ ել յերազում տեսավ հաստ մարդուն, վոր իրենից յերազում տեսավ հաստ մարդուն, վոր իրենից ջուր եր ուզում ու ծիծաղում, ծիծաղում... Նա զարթնում եր, վեր թռչում ու շուրջը նայում.

մոռը ժարդ չեր լինում, ծառերն ելին միայն
խշում գիշերվա քամուց և ասուներն ելին
զրպութ այլու ամայության մեջ։ Ու զարթնելիս
ամեն անդան ուրախությունը հիշութ եր վաստա-
կածը։ Մի շարաթ ել այսորվա պես աշխատի,
ահազին փող կունենա, — մատծում եր ու նորից
բնում։

Մյուս որը, կես որից առաջ, յերբ սովորաբար մարդիկ հավաքվում ելին այզի և յերբ տուանձնապես ծարավում ելին, Արշոն կուլան լցրած, մտավ այզի և ծառուղիներում շրջելով, սկսեց վորոնել հաստ մարգուն. քանի դեռ ուրիշ աղաներ նրան չելին ճանաչել, ուզում երդանել. բոլոր «մուշտարիներից» ամենահուսալին հաստ մարդն եր. ջուր շատ եր խմում և լավ ել վճարում եր—ամեն անզած տասը կսպեկ:

Շրջեց մի ժամի շափ չգտավ։ Ուրեմն զեռ
շի յեկել՝ մտածեց, կամ դուցե, զնացել ե
քաղաքից։ Հուսահատված ուզում եր արդեն
ջուր առաջարկել մյուս մարդկանց, հանկարծ
դեմ առ զեմ հանգիպեց հասա մարդուն, վոր
յերեկվա տղայի հետ նոր մաել եր այգի և պը-
խարկը վերցրած, յերեկվա պես, ճակատն ու
վիզը որբում եր թաշկինսակով։

Երան ականիլուն պես՝ Արշան կտնի առավ ու ճպապց:

Պար, սառը ջնուր, — տասց նու մարզու
ուշտղլությունը զբավելու համար և, աեսնելով
զբաղված ե քրտինքը սրբելով, հարցրեց, — Պուր
չե՞ս ուզում, յեղբայր:

— *QñLp. mñLp.*

Հաստ մարդը, նստելով, խմեց ելի յերկու
բաժակի հետո առաջարկեց հետի աղային. նա
ել խնեց ձի բաժակ, և այդ յերկը բաժակի հա-
մար տվեց առանուհնեղ կոպեկ։ Հետո, կարծես,
ճանհաչեց Արշովին։

$\partial_{\mu_1} \partial_{\mu_2} b_{\mu_1 \mu_2} \psi^{\mu_1 \mu_2} = 0$, $\partial_{\mu_1} b_{\mu_1 \mu_2} = 0$,

Առաջնական ուղինով արտավ. Եցա

Մասնակիութեա ժապարց

ՅԱՐԱՎԵՐ ՀԱՅՈՒԹ

— 46 —

U.P.2mn *U.P.2mlmn* *U.P.2mlmn*

— Կարասի:

— Խափ, Տիսկ կուրու

104

Հաստ մարդի վաղեվորվոց:

— Հը, կարմա մեկն եւ լոսի:

— կարսմ, հպարտացակ օքշոն:

θήκη η θέψη της, την

սորից հինգ կոպեկ ստացավ:

Յեզ այդ որը նու շտահ կոչ մնաց. մենակ

հասուից ստացավ քսանուհինդ կոպեկ, մյուս
մարդկանցից ել մի ասանուհինդ կոպեկ - յեղավ
քառսուն կոպեկ:

«Ո՞, քառսուն կոպեկ», մատածում եր նա
յերեկոյան փողը կրծքի զբանում տեղավորելով
և ուրախությամբ մյուս բրգու մասին մատա-
ծելով:

Յեկ այնուհետեւ հաստ մարդը նրա ջուրն եր
խմում - ամեն անգամ յերկու յերեք բաժակ,
հետո հանսքով զբազ եր դաշլիս Արշոյի հետ,
խմեցնում եր նրան մի քանի բաժակու դարձալ
հինգ - ասալը կոպեկ տալիս: Արշոն ծարավ չեր
լինում, զժվարանում եր խմել, բայց քանի վոր փող
եր ստանալու - խմում եր: Յեկ հասար կամաց
կտորաց ավելացնում եր բաժակների թիվը. յեր-
կուսից ահցավ յերեքի, յերեքից՝ չորսի, հետո
մի որ ել առաջարկեց խմել հինգ բաժակ: Արշոն
յերեքը խմեց ու կանգ առավ. ապա ուժ արավ
խմեց և մեկը, կոկորդը լցվեց, բայց վիզը յեր-
կարեց և ջուրն իջավ ցած. այդ ժամանակ զլսին
քաշեց և հինգերորդը Այս անգամ արդեն բեւ անը
լցվեց և բիշ եր մնում թափի...»

Հաստ մարդն ու հետի տղան ծիծաղում եին,
բայց Արշոն պահեց իրեն, մի կերպ ջուրը ծծեց
ներս, վոր չխայտառակիր: Թեև զժվար եր, բայց
խմեց, աչքերը - միայն արցունքուցին. սակայն

ուրախ եր, վոր այդ հինգ բաժակի համար ստա-
ցավ տասնուհինդ կոպեկ:

Ազսպես շարունակեց շարթից ավելի.
Հասալ խմում եր և Արշոյին խմեցնում ու ծի-
ծաղում: Մի որ ել հասար, յերեքինքն ու հետի
տղան խմեցին, Արշոյին առաջարկեց՝ ամբողջ
կուլան խմել:

— Յեթե խմես, — ասաց, — քսան կապեկ կտամ: Ամբողջ կուլան...

Արշոն նայեց կուլին ու ժպտաց:
Հասալ նույնակես ժպտաց:

— Հը, կըխմեմ:
Քսան կոպեկի գալթակղությունն այնքան մեծ
եր, վոր Արշոն չգիտացավ և կուլան քաշեց զլսին —
կը՛ և կը՛ և ...»

Կլլլլլլ եր ջուրը կուլի կոկորդում և գնում
Արշոյի բերանը, Խմեց նա, խմեց և հանկարծ կանդ
առավ, ջուրը լցվել եր մինչև բուկը ու ել չեր
գնում: Նա գկրաց, վորձկաց մի յերկու անգամ
ու ապա՝ աչքերը լցվեցին արցունքով:

Հաստը, ձեռները ձնկներին, ծիծաղում եր,
«համամամա»... Ծիծաղում եր ու տառմ:

Այս չխմեցիր, բայն չեմ տա: Պարմանը
ոլորման ե...»
Արշոն ուղղվեց, հապաց և կուլան նորից
բաշեց զլսին:

Մի քանի ջուր ծախող տղա և հարեան
նստարաններին նստած մարդիկ նայում ելին, թէ
կարմղ և արդյոք Արշան խմել մի կուլա ջուր։

Մինչ այդ ջուրը կլկում եր կուլի կոկորդում
և թափում նորից Արշայի բերանը... թափում եր,
թափում և, Արշային թվում եր, թէ վերջ չունի
կուլի ջուրը. Եղավ մի վայրկան, վոր նրան թվաց
թէ և եղավում ե. մեկ ել աչքերը կուլ գնացին,
վտաերն ու ձեռները գողգողացին և նա վախեցած
ցնցվեց. Ջուրը թափեց բերնից ու կուլից միտ.
Ժամանակ և շորերը թրջեց. Վրա հետ միասին
աշքերից ցատեցին արցունքի շիթեր, ու հեկեկաց։

Ջուր ծախող տղաներն ու հարեան նստարաններին նստաղները քրքջացին, իսկ հաստ մարդը,
բեղերն ուղղելով, ժպառում եր, ծիծաղում է
ասում։

— Վոչի՞նչ, վոչի՞նչ, աղաս, մի լար...,

Բայց Արշան շարունակում էր լալ և թերով
աչքերը սրբել։

— Դե, լավ, լավ — ասաց մարդը նորից ծի-
ծաղելով, չխմեցիր, բայց, վաչինչ. առ. առ քեզ
բան կոպեկ. Առ...

Առ, գորով, Արշայի լուսը կոխեց մի քսան
կոպեկանոց։

Բայց, — ահս վասելիր բան, — Արշան բան կո-
պեկանոցը յետ շպրտեց համեկարծ։

— Զեմ ուզնում, ասաց հեկեկալով, — քեզ
ըլլ'...

Քսան կոպեկանոցը դիպավ մարդու յերե-
սին, հետո ընկալ գետին, իսկ ինքը՝ Արշան վի-
րավորված, հուզված, աչքերը թերով որբելավ,
զնաց դեսպի այցու ծայրը, արև տեղ, վոր թրջված
շորերը չոր սցնի։

Հազիվ Արշան դուրս եր յեկել այգու ծալլը՝
հանդիպեց Քրիստու Քուրդը մի նոր մեշոկ ու-
սին զցած՝ կանգնեց նրա առաջ։

— Սպեկուլանտ, մի քիչ ջուր առուր։

Արշան շխսուեց հեկեկանը զապելով ուզեց
շարունակել ճանապարհը, բայց Քուրդը նորից
կտրեց առաջը։

— Ջուր անոր, ապաւմ եմ։

— Կորի, — զլատ սսխանեց Արշան արհար-
մարհանըով։

— Զես արալիս, ապանաց Քուրդը ձեռքի
մեկը լուսնոցը շիւած։ Զես արալիս...

Զես, — բարկացավ Արշան, լնազդաբար
կուլան զնելով թիվ ատկ. չեմ տալիս...

— Զես տալի, դե առ քեզ, — ասաց Քուրզը
և բռունցք շինած ձեսից մի քար նետեց կուլի
վլա:


Լովեց մը խուլ թրխկոց, կուլի փորը փշուր-
փշուր թափեց գետին և մաջը մնացած ջուրը
թրջեց նորից Արշոյի թրջված շորերը: Յեվ միայն
կուլի ունկն ու վիզը մնացին նրա թեկ տակ:

Արշոն, հանկարծակի յեկոծի պես, մնաց
ապշած, ու մինչ ուշքի կողար՝ Քուրզը փախավ:

Տեսնելով նրա փախուստը՝ Արշոն ել չհամ-
բերեց, ինքն ևս վազեց նրա յետից՝ վրդովփած
ու լացակնած: Նա վազում եր և ճանապարհից
քարեր վերցնելով՝ նետում Քրզի յետից: Բայց
վոչ մեկը գնչ միայն չեր դիպչում, այլ և չեր
հասնում նրան: Այդ ժամանակ Արշոն զայրացած,
առամներն իրար սեղմած, քայլերն արագացրեց,
նետեց մի յերկու քար և—չդիպավ: Քուրզը
վոչ թե վազում, այլ, կարծես թշում եր: Յեվ
այն ե, այզոց գուրս գալով՝ ուզում եր անցնել
փողոցը՝ Արշոն նետեց վերջին քարը, վոր դրա-
նով վերջ առ իր հետապնդումին:

Այս անգամ, սակայն, քարը չվրիպեց:

Յեվ Քուրզն յերեսնի վայր փափեց դեանին:



— Դե գնա, — ասաց Արշոն, և ուզեց յետ
դառնալ: բայց միլիցիսները բռնեց նրա ձեռք:

VII

Միլիցիսները Արշոյին ու Քրդին տարավ միլիցիատուն, ուր նրանց հարցաքննեցին ովեն, վարտեղացի, ինչպէս ուր պարագում: Հարցաքննեցին ու պահեցին: Արշոյն խնդրեց, վար իրեն բաց թողնեն, վորովհեակ մեղք չունի: Պատմեց, վար Քուրդն ամեն որ ծագրում եր իրեն, «ոպեկուլյանտ» եր ասում, ինքը լսում եր, չեր պատասխանում, բայց յերբ կուլտն կոտրեց—ել չհամբերեց ու խփեց:

Նրա խնդիրքը, սակայն, չհարգեցին, ոյլ, ընդհակառակը, տարսն նրան փակեցին մի փոքրիկ սենյակում, ուր կային յերկու հասակավոր մարդ, վորոնց բանել եյին զողովրդյան համար: Դրանցից մեկը շարունակ քնում եր և, քնած ժամանակի, կամ զայրացած խոսում եր կամ խելագարի պես ծիծագում: Արշոյն զողում եր, չլինի հանկարծ այդ մարդը խեղզի իրեն: Բայց, լույս եր, յերկու որ պահելուց հետո, յերկուսին ել Արշոյին ու Քրդին—տարան Մանկական Գաղութ: Արշոյն փախենում եր, վար այդ նոր տեղն ել միլիցիատուն բանտի պես բան լինի, ուստի ճանապարհին բա-

լոր ժամանակ մտածում եր՝ լավ կըլինի մի հարմար տեղից փախչի: Բայց չփախավ, վորովհետև միլիցիոները մի քայլ չհեռացավ մինչև Գաղութ, վոր գտնվում եր հեռու, քաղաքի ծալրին:

Սակայն Մանկական Գաղութը բոլորովին այլ բան եր, քան Արշոյն յերկայտում եր: Հենց բակը մտան թե չե՞նա զարմացավ ծաղկեների առատության վրա: Ի՞նչքան ծաղկեկ կար — գույն, գույն, մեկը մյուսից գեղեցիկ, բոլորը շարքով, խնամքով: Ամեն ծաղկանոցի մեջ մի թումբ եր շինված, իսկ թմբի մեջտեղը անկված եր մեծ՝ կարմիր կամ կապույտ ծաղկեկ: Լավ եր... Ծաղկեներից բացի՝ բակում կային խնձորի և տանձի ծառեր՝ պտուղներով ծանրաբեռ: Մի քանի փոքրիկ տղաներ քաղհանում ելին ծաղկեների մարգերը, մի յերկուսը՝ ջրում ելին ծառերը:

Բակը Արշոյին դուք յեկավ, ընդարձակ եր և ամբողջովին սալած ու մաքնւր: Բայց քանի մոտենում ելին տանը՝ նրա անհանդստությունն ավելանում եր. ի՞նչ պիտի անեն արդյոք, ի՞նչ պես պիտի վերաբերվեն...:

Միլիցիոները նրան ու Քրդին տարավ վերի հարկը: Մանգուղներով բարձրացան և մտան գրաւենյակ:

Վարիչը միջահասակ, բեղերի ծալրերը կըտրած, վերնաշապիկով մարդ եր, վորին բոլորն

«ընկեր Յերվանդ» ելին ասում: Միլիցիոներն
ինչ-վոր բան ասաց նրան, իսկ նա Արշային ու
Քրդին նայեց և ժպտաց: Հետո հարցրեց նրանց
անուն ու ազգանունը և թե վորտեղացի են:

— Իսկ դու գըել-կարդալ գիտե՞ս, — գիմեց
նա Արշային:

Արշոն պատասխանեց, վոր մի քիչ գիտի,
իսկ Քուրդը բոլորովին չգիտեր:

— Կուզե՞ս սովորել, — հարցրեց վարիչը
Քրդին:

Քուրդը աչքի տակով նայեց վարիչի կտրած
քեղերին, վերնաշապկի կրծքագրովանից կախված
ժամացուցի շղթային և ժպտաց:

— Ինչի՞ համար սովորեմ, — հարցրեց նա:
— Վոր գիրք կարդաս, նաև ակ գըես, հաշիվ

պահես:
— Ում համար, — հարցրեց Քուրդը:

— Քեզ համար, — ասաց վարիչը:

Այս հարց ու փորձից հետո՝ ընկեր Յերվանդը
կարգադրեց, վոր նրանց տանեն բազնիս: Յեզ
նույն որը յերկուսին ել, մի քանի ուրիշ տղաների
հետ, փորձնց նույնպես միլիցիան եր բերել քա-
դաքից, տարան բաղնիս, շորները փոխել տվին
ու նորից բերին Գաղութ: Գաղութում շատ
տղաներ կալին՝ ութից մինչև տասնուշինք տա-
րեկան: Մի քանիսին Արշոն ճանաչեց, տեսել եր

շուկայում, փողոցում խուժանություն անելիս:

Առաջին մի քանի որ կյանքը Գաղութում
ձանձրալի էր թվուն Արշոյին, բայց կամաց կա-
մաց ընտելացավ, վորովհետև որերն անցնում եին
գործի ու զբաղմունքի մեջ, ել ձանձրանալու ժա-
մանակ չեր լինում: Առավարք վեր ելին կենում,
լվացգում, սրբում ածեն մեկն իր սրբիչը,
մարզանք անում ու պնում սեղանատաւն, ուր
տալիս ելին թեյ, հաց ու պանիր, հետո գնում
ելին արհեստանոց՝ փոքրերը կարտոնից բաներ
շինելու, իսկ մեծերը հուսանություն սովորելու.
շինում ելին աթոռներ, սրբիչ կախելու բաներ,
փոքրիկ սեղաններ, պահարաններ: Ինչ ուզեյիր—
վարպետը սովորեցնում եր: Բայց այդ աշխա-
տանքն Արշոյին գուր չեր գալիս, մասնավանդ այն
պատճառով, վոր Քուրդն իր հետ եր լինում: Նա
ուզում եր Քրդից հեռու լինել, վորովհետև Քուրդն
իրեն լավ չեր պահում, մեկ-մեկ ելի, առաջկա
պես, «սպեկուլանտ» եր ասում: Ճիշտ ե, զա-
տիքարակը՝ ընկեր Համբարձումը նրան զու շացրեց
մի քանի անգամ, վոր այդպես լավ չի, ընկեր-
ների սոս այդ խոսքը շասի, վորովհետև մյուս-
ներն ել կոսովորեն: Բայց Քուրդը չեր խրատվում,
գործի ժամանակ գալիս եր թեքվում Արշոյի ա-
կանջին և բարձրածայն կանչում: Ծապելուլանտ»:
Մի յերկու անգամ ել, թելի ժամանակ, իր բա-

ժակի մեջ աղ լցրեց, թե՝ «թող քաղցր ըլի»...։ Արհեստանոցի աշխատանքը վերջանում էր ճաշի ժամանակ։ Ուսում ելին մեկ, յերկու տեսակ կերակուր ու գնում գպրոց։ Արշոն առաջին խմբումն էր. բոլոր առարկաների մեջ նրան դուր էր դալիս թվաբանությունն ու աշխարհագրությունը։ Թվաբանության ուսուցիչ ընկեր Միհասը նույնպես դուր էր դալիս նրան, վոր իրեն՝ «Արշուի» փոխարեն, միշտ «Արշալույս» էր ասում։ Մինչ այդ Արշոն չեր իմանում, վոր իր անունը «Արշալույս» ե. նա մանկությունից միայն «Արշո» էր լսել, և զարժանում էր, վոր չի իմացել թե այդպիսի լավ անուն ունի։

Հետո նրան ավելի գուր ելին դալիս ակուսիք զբաղմունքները։ Դասերից հետո, յերբ քիչ խաղում ելին, գնում ելին ակումբ. տղաներն այնտեղ կարդում ելին գիրք, լրագիր. խաղում ելին շահմատ, տամա։ Ամենից հետաքրքիր էր շահմատը։ Ի՞նչան խելք էր հարկավոր խաղը առանելու համար...։ Այդտեղ՝ ակումբում հասակավոր տղաները յերբեմն թատրոն ելին խաղում, բեմից բաներ ելին կարդում, յերեկոները դաստիարակ ընկեր չամբարձումը և վարիչը՝ ընկեր Յերվանդը դալիս ելին զրուցում, սեկմեկ ել բժիշկն էր դալիս խոսում. նա ասում էր—հաց ուտելիս պետք ե լավ ծամել, կերակուրի վրա շատ ջուր

։ Հիսմել և հետո, ասում էր - ամեն որ պետք է ատամները լվանալ։ «Մարդ բան ու գործ չունի՝ պետք ե ատամները լվանա», մասածում էր Արշոն և հիշում հոր ատամները, վոր թեհ չեր լվանում, բայց միշտ սպիտակ ելին ու առողջ։ Եեկ մազերով ու ակնոցով սարդ եր բժիշկը, և այնքան բան գիտեր... Ասում էր՝ շատ մի ուտեք առհասարակ և սանավանդ յերեկոները քիչ կերեք, վոր լավ քնեք։ Յեթե շատ ուտեք, ասում էր, չեք կարող լավ քնել... Այս մեկը միշտ էր ասում բժիշկը։ Արշոն այդ փորձով գիտեր. մի յերեկո տղաները խնձոր ելին բերել - լավ կերավ և գիշերը շատ անհանգիստ էր. վերակացու ընկեր Մեսրոպը կարծում էր, թե Արշոն ախուր ե, դրա համար քունը չի տանում։

Չեր սիրում Արշոն, յերբ գիշերը ննջարանում, տղաների քնած ժամանակ, վերակացուները գնում-գալիս ելին մահճակալների արանքով, և այդ պատճառով չեր կարողանում կարգին, մի քիչ յերկար զբուցել ընկերների հետ։ Խոկ Արշոն հիմա շատ ընկերներ ուներ Գաղութում, բայց տաերիմ էր միայն յերկուսի հետ։ Մեկը Տաճատն էր, մի վորբ տղա, վոր բռնել ելին խուժանության համար. մի տարի յեր Գաղութումն էր. ուզում էր հուսնություն սովորի ու գնա զյուղ։ Մյուսը՝ Արամն էր, սրան ել բռնել ելին խու-

ժանության համար. լերկու տարի մնացել եր՝ Գաղութում և հիմա աշխատում եր քաղաքում՝ տպարանում՝ Ֆարան... Արշան այդ խոսքը առաջին անգամ Սրամից եր լսում»

— Եղ ի՞նչ բան ա՞ եղ պատարանը, — հարցուց նա, — դուքն ա թե կոպերատոր:

— Զե, տպարանը ուրիշ ա, — բացատրեց Արամը: — Ենտեղ գիրք, կազմի են տպում:

— Գի՞րք, — կարծացավ Արշան:

Հետաքրքրական եր տեսնեց այդ տպարան ասածը: Արամը պատմում եր, վոր իր համար տպարանում գործ գտել ե ընկեր Յերվանդը: Պատմում եր, վոր համ սովորում ե, համ սոճիկ ե ստանում, համ ել կեսորից առաջ մի բաժակ կաթ են տալիս: Շատ պատմություն եր անում: Արամը տպարանի մասին, և մեկը մասսից հետաքրքրական: Մի ցերկու անգամ եք դիրք բերեց և առաց, մոր իրենց տպարանում են, տպել: Դըքերից մեկը պատկերագրդ եր և Արշան: շուտ գույքեկավ:

— Վոր գամ տեսնելու, կթողնթն, — հետաքրքրվեց Արշան մի ոք:

— Զե, ասաց Արամը, կողմնակի մարդկանց մուտքեն արգելված: Եւ Մեկ մուտ շատ խիստապահ է:

Արշան մտածմունքի մեջ ընկալի նու մտա-

ծում եր ի՞նչպես անի, վոր այդ տպարան ասածը տեսնի. արդյոք ընկեր Յերվանդը կթողնի՞... Արշոյին, իբրև նոր յեկածի, դեռ քաղաք չելին ուղարկում վորեա բան իերելու. պետք ե մնար մի, յերկու ամիս, վոր քաղաք ուղարկեն: Այդ պահանգավ նա մտածում եր ընկեր Յերվանդից թույլտվություն խնդրել:

Բայց մի որ այնպես պատահեց, վոր ընկեր Յերվանդը, առանց խնդրելու լել, թույլ տվեց: Ամեն որ լավ վարքի տեր տղաներից մի խումբ ուղարկում եր քաղաք—հաց կամ այլ բաներ բերելու: Յեկ վորովիետե այդ որը, գնացող տղաներից մեկը հիվանդացել եր, Արշոյին ուղարկեց նրա փոխարեն, Քաղաք գնալիս Արամն ել իրենց հետ եր: Ճանապարհին նա ցույց տվեց տպարանը: վոր մի սկ, բարձր տուն եր՝ մեծ մեծ լուսամուտներով, վորոնք բացվում եյին փողոցի վրա: Լուսամուտները, սակայն, նրա բախտից բարձր եյին ե նա չեր կարողանում բան տեսնել: լսվում եր միայն ինչ-վոր խուլ աղմուկ...

Մի ցերկու անգամ նա գնաց յեկավ—վոր չինչ չերեաց: Հետո անցավ բակը, մտածելով, թե այնտեղից, գուցե, մի բան յերեաւ:

Բակի վրա բացվում եր տպարանի ընդառակ պատշաճամը՝ թղթերով ու տախտակներով լիքը: Արշան, զգուշությամբ, շուրջը նայեցով, քայլ

առ բազ առաջ գնաց, մտավ պատշգամ, կանդնեց մի բաց լուսամուտի առջև ու նայեց:

Ներսը լիքն եր կապույտ շորեր հագած մարդկանցով ու տղաներով: Տախտակե աչքե-աչք արկղների առաջ կանդնած՝ նրանք մեկ-մեկ վերցնում ելին այդ աչքերից ինչ-վոր փոքրիկ-փոքրիկ բաներ ու դարսում ինչ-վոր յերկաթե բանի մեջ: Այդպես անում ելին վոչ սիայն հասակավորները, այլև փոքր տղաները:

Զարմանալի յեր. վննց ելին անում այդ մանր գործը, ու ինչպես ել արագ ելին անում....

Այդտեղից, սակայն, բան չհասկանալով Արշոն անցավ առաջ: Դենք՝ մյուս սենյակում աշխատում ելին մեծ-մեծ մեքենաներ. ամեն մեկի վրա մի մարդ կամ մի տղա: Դրանք թուղթը դնում ելին մեքենայի դլիքն, մեքենան ինքն-իրեն թուղթը քաշում եր ներս և մյուս կողմից դուրս դցում, ու այնպես ել շուտ-շուտ—զարմանք....

Այ թե ինչ բան եւ յեղել տպարանը....

Արշոն մի բանի անգամ անցավ լուսամուտից. լուսամուտ, նայեց բաժանմունքները ու գլուխը շարժեց զարմանքից: Ամեն բան հետաքրքրական եր ու զարմանալի... Մեքենաներն այնպես ելին դուռում, մարդիկ այնպես ելին աշխատում....

Մարդ կարողանա մոտիկից տեսնել՝ ի՞նչ են անում:

Մի կես ժամ նայելուց հետո, նա վագեց դեպի փուռը, ուր ընկերները հաց պիտի վերց-նեցին:

Յեվ այնուհետեւ, հացի կամ այլ բանի համար քաղաք գալիս՝ Արշոն մի քանի լոպելով, յերբեմն կես ժամով, անցնում եր տպարան, կանգնում պատշգամի լուսամուտների առջև ու նայում՝ թե ինչպես զբաշարները, կազմարարները, փոքրիկ աշակերտները իրար յետելից գալիս—մտնում ելին տպարան և, իրանց յերկար կապույտ շորերը հագնելով, սկսում ելին աշխատել: Գլաշարները կանգնում ելին աչքե-աչք արկղների առջև և փոքրիկ-փոքրիկ մեխի նման բաները վերցնում ու շարում ինչ-վոր յերկաթե բանի մեջ: Նույնն անում ելին և աշակերտները: Իսկ մյուս բաժանմունքներում աշխատում ելին մեքենաները, հետո կազմարարները... Դրաշարանոցում նրան ավելի զարմացնում ելին իրեն հասակակից փոքրիկ տղաները, վոր մեծերի պես կապույտ հագած, մեծերի պես արագ-արագ վեր ելին քաղում մեխի պես փոքրիկ բաները աչքե-աչք արկղներից:

— Հը, ինչ ես ուզում, խուժան,— յերբեմն հարցնում ելին զբաշարները:

— Հեծ: — պատասխանում եր Արշոն — նա-դում եմ:

— Նայիր, նայիր, — ծիծաղում ելին դրա-
չարները:

— Մարդը կառավարիչ է, ի հարկե, պիտի
նայի, — ավելացնում եր մեկը:

Ու ծիծաղում ելին:

Արշոն նրանց կատակների մեծ սասր չեք
հասկանում և շարունակում եր դիտել նրանց ու
մեքենաների աշխատանքը, վոր քանի զնում
դառնում եր հետաքրքրական: Մեքենաները
շրիկում ելին, գուռում, թուղթը նրանց վրա փալ-
լում եր մի ակնթարթ ու կուլ գնում նրանց ա-
հագին փորում: մեքենավարներն աշխատում ելին
մեքենաների պես կանոնավոր ու արագ: կազմա-
րաբները թղթերը ծալում ելին, կտրում, կպցը-
նում, իսկ գրաշարներն անընդհատ վեր ելին
քտղում մեխի նման փոքրիկ բաները, ու ամբողջ
տպարանը լցված եր աշխատանքի աղմուկով: Մի
պարագ մարդ չկար, ամեն մեկը մի բան եր
անում, ու բոլորն ել՝ կանոնավոր ու արագ:

Շատ բան այդաեղ Արշոն չեր լմբոնում և
շատ բան անհասկանալի իմ նրան: իսկ ամենից
անհասկանալին այն եր, ինչ անում եր իր հա-
սակի մի տղա: — գրգնակի պես կոլոր մի բան,
տանում-բերում եր նա սև, ձութի նման բանի
վրա ու բոռում ինչ վոր կապած բաների և, վրա-
ները թուղթ գնելով՝ գլանի պես մի մեծ կոլոր:

բան քաշում: Գուրս ելին գալիս տպած թղթերը
«Այ քեզ նրաշք», զարմանում եր Արշոն և
մտքում նախանձում իր հասակի աղաներին, վոր
մոտից տեսնում, հասկանուեց են այդ բաները:

Կարողանանք ինքն ել մի անգամ մաներ
ներս... Ու բանի-քանի անգամ ուզում եր մանել,
բայց դժվար եր: Արամի տված պատասխանները
նրան չելին բավարարում: Նա ուզում եր մոտի-
կից, իր աչքով տեսնել այդ նրաշք բան երը, այդ
սև ահագին մեքենաները, գնդակի պես, զլա-
նի նման կոլոր գործիքները: աշքե-աչք արկըդ-
ները... մի խոսքով՝ բոլորը ինչ կար:

Ցեղ ահա մի որ, յերբ նա, սովորականի պես,
լուսամուտից նայում եր ներս ապարանի վա-
րիչը հարցըեց, թե ում և ուզում:

Արշոն, ամաչելուց, զլուխը կախ զցեց:

— Հեծ լնկեր վարիչ գալութի տղա յեմ-
— Ալստեղ լինչ ես անում:

— Տպարանին նայում եմ, լնկեր վարիչ, —
ասաց նա այն տոնով, կարծես պաշտօնը հենց
այդ եր ապարանին նայել:

Վարիչը ծիծաղեց:

— Նայմեն ես:

— Այս լնկեր վարիչ ուզում եմ մտիկ տ-
նեմ, — ուզգեց նա ու ժպտաց, ճերմակ ատամները
բանալով:

Նրա հետաքրքիր հայացքներից վարիչը նկատեց, վոր նա ազան ցանկություն ունի տպարանը տեսնելու, ու ժպտալով հանձնարարեց տղաներից մեկին, վոր տպարանը ցուց տան «խուժանին»:

Արշոն, սրափ տրոփլունով, մտավ ներս: Յեզարին ինչ տեսավ շմեցնող տպավորություն արագ նրա վրա:

Բայց այդ որը Արշոն շատ ուշացավ, համարյա ժամ ու կես. այնպես վոր յերբ հասավ Գաղութ—տղաները վաղուց արդեն ճաշել—պատրաստվում էին դպրոց զնալու, Գաստիարակ ընկեր Համբարձումը զարմոցավ, վոր այդքան ուշացել ե, և ուղարկեց վարիչի մոտ:

— Ըսկեր Յերվանդը ուզում ե քեզ տեսնի, — ասաց:

Արշով սիրաը դողը լնկավ, բայց և այնպես գնաց:

Ընկեր Յերվանդը զրասենյակումն ել:

— Հը, վորամբութիւնը Արշոն, ինչու ուշացար, հարցը նա ուշապիտ նրան նայելով:

Արշոն նայեց վարիչին ու զլուխն իջեցրեց. նա չգիտեր ինչպես արդարացնի իր ուշացումը, սիկսույն ժամանակ և չեր ուզում խաբել վարիչին, այնքան նա բարեկամաբար, սիրալիք եր նայում իրեն, վոր անհարմար եր սուտ խո-

սել և, վերջապես, ընկեր Յերվանդն այնքան հասկացող եր, վոր սուտը կարող եր իսկույն բռնել:

— Հը, խոսիր,—ասաց ընկեր Յերվանդը. — ասա տեսնենք՝ ինչու քաղաք գնալիս միշտ ուշանում ես... Խոսիր, մի ամաչի:

Արշոն ելի լուռմ եր:

— Գուցե բարեկամների, ընկերների յես հանդիպում, հը... Այստեղ բարեկամներ ունես:

Արշոն զլուխը շարժեց. — Վ՞չ:

— Իսկ ընկերներ... հը:


Արշոն դարձյալ լուռմ եր. մտածում եր նույնից ինչպես արդարացնի իր ուշացումները, ու հնար չեր գտնում: Ուստի՝ մեղալորի պես կանգնեց վարիչի առաջ մի ըռպե, յերկու ըռպե, մի քանի անգամ աչքի տակով նայեց ընկեր Յերվանդի սեեռուն, սպասողական հայացքով աչքերին. նայեց, նայեց, զլիսարկը ձեռի մեջ տրորեց ու, ել չգիտացավ, և պատմեց ուշանալու պատճառը: Պատմեց, վոր գնում ե տպարան, այստեղ, ուր Արամն ե աշխատում. այնտեղ այնքան հետաքրքիր բաներ կան. նայում ե, և դրա համար ահա ուշանում:

Ընկեր Յերվանդն ուշադիր լսեց նըան, լսեց, ժպաաց և հարցը եց.

ԼՈՒՅԱ ԵՆ ՏԵՍԵԼ ԱՏ. ԶՈՒՅԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ
ՅԵԿ ՊԱՏԱՆԻԱԿԱՆ ՀԵՑԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

1. Ելեքտրական էամպը 35 կուգ.
2. Ծովանիլ 30 »
3. Ցերկաթուղին 25 »
4. Հազարան բլբուլ 45 »

ՀՀ Ազգային գրադարան



NL0398935

30045